17 մայիսի 2018 թվականի N 576 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 494-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 11-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԱԱՍ ԻՆԴՈՒՍՏՐՅԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 494-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) որոշման հավելվածը 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ և 4-րդ կետերով.

«

3.	4811 90 000 0	Ջերմազգայուն թուղթ	ջերմազգայուն թուղթ, որի խտությունը՝ 44-80 գ/քառ. մ, հաստությունը՝ 53-70 միկրոն, պայծառությունը՝ 65-90 տոկոս, պատկերի պահպանման ժամկետը՝ 3-7 տարի, ջերմազգայու-նությունը՝ 50-75C°, պատկերի կայունությունը՝ 70-95 տոկոս	կգ	4 000 000	ԵՄ/Կորեա/ Վրաստան/ Չինաստան/ Հնդկաստան/ Ինդոնեզիա/ ԱՄՆ	2 750 000 000
4.	4821 90 100 0	Ինքնասոսնձվող ջերմազգայուն թուղթ	ինքնասոսնձվող ջերմազգայուն պիտակի թուղթ՝ չտպագրված, որի արտաքին շերտը ջերմազգայուն է, շերտերն իրար սոսնձված են	կգ	2 000 000	ԵՄ/Կորեա/ Վրաստան/ Չինաստան/ Թուրքիա/ Հնդկաստան/ Ինդոնեզիա/ ԱՄՆ	2 575 500 000

».

2) որոշման հավելվածում «ԸՆԴԱՄԵՆԸ 750 000 000» պարբերությունը փոխարինել

«ԸՆԴԱՄԵՆԸ 6 075 500 000» պարբերությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ